



«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի
EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց **2023**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝

Ինչպե՞ս զարգացնել սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն
և ստեղծագործական ունակություններ տեխնոլոգիա առարկայի դասավանդման ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Սուսանբար Սարգսյան

(Գավառի Գեորգի Մնացականյանի

անվան N7 միջնակարգ դպրոց)

ԳԱՎԱՌ 2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Գլուխ 1. Ինչպե՞ս գարգացնել սովորողների մոտ ստեղծագործական կարողություններ.....	5
Գլուխ 2. Ինչպե՞ս գարգացնել սովորողների մոտ ինֆորմայնություն և նախաձեռնողականություն.....	11
Եզրակացություններ և առաջարկություններ.....	17
Օգտագործված գրականության ցանկ.....	18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամեն անգամ մեծ սիրով, նորություններով, սպասումներով մտնելով դասարան՝ ակնկալում ես, որ ամեն բան շատ հաջողված է լինելու: Իհարկե, հիմնականում այդպես էլ լինում է: Սակայն երբեմն անակնկալի ենք գալիս, երբ մեր հույսերը չեն արդարանում. հանդիպում ենք աշակերտների տարատեսակ նախասիրությունների, դժգոհությունների, ընկալման խնդիրների, այլևայլ հետաքրքրությունների:

Բերեմ մի օրինակ այս տարվա իմ փորձից: Տեխնոլոգիա առարկան դասավանդում եմ երկու 7-րդ դասարաններում էլ: Պետական ծրագրով նախատեսված հերթական թեման էր «Նյութերի գեղարվեստական մշակում»: Երկու դասարաններում էլ շատ մեծ սիրով ուսումնասիրում և պատմում էին մեր հին հայկական արհեստի (գորգ, կարպետ) պատմության, տեսակների, զարդանախշերի տեսակների մասին: Աշակերտների ոգևորությունը ինձ մեծ բավականություն էր պատճառում: Հանձնարարեցի ծնողների օգնությամբ պատրաստել ինքնաշեն դագաղներ, իսկ ովքեր կարող էին, ձեռք բերեին վաճառում եղած փոքրիկ դագաղներ:

Երբ սկսեցինք հինգերու և հյուսիսը գործընթացը, ես հասկացա, որ այն դասարանում, որտեղ իմ սպասելիքները մեծ էին, չպետք է արդարանային: Աշակերտներից ոմանք, ովքեր հրաշալի ներկայացրել էին մեր արհեստները, գորգագործությունը, դրա պատմությունը, գործնական աշխատանքի ժամանակ դժվարանում էին ինքնուրույն հիմնել, ստեղծել սեփական օրինակները, չէր ստացվում նրանց հետաքրքրությունը շարժել այդ թեմայի շրջանակներում: Ինչու՞ է այդպես, չէ՞ որ երկու դասարաններում էլ նույն ծրագրով, թեմատիկ պլանով և չափաբաշխով եմ աշխատում, նույն հոգատարությամբ և սիրով եմ մոտենում բոլոր աշակերտներին: Ի՞նչ անել, որ աշակերտները ոչ թե ուղղակի կատարեն հանձնարարված աշխատանքը, դիմեն ընկերների օգնությանը կամ մեկ ուրիշը աշխատի իրենց փոխարեն , այլ իրենք հանույժով, հետաքրքրությամբ ու ոգևորությամբ աշխատեն, ստեղծեն տարբեր օրինակներ, բավականություն ստանան իրենց աշխատանքից: Ընթացքում նկատեցի, որ նրանցից մի քանիսը իրենց հետ բերում են ուլունքներով հյուսված վզնոցներ, թևնոցներ, հեղուկագործ խողովակներ: Ես հասկացա, որ այս սովորողները այլ նախասիրություններ ունեն, թեև նրանք մեծ սիրով սովորում էին գորգարվեստին նվիրված տեսական հատվածները, սակայն գործնական աշխատանքները նրանց չէր գրավում: Եւ ես հասկացա, որ այդ իրավիճակից կարող եմ դուրս գալ միայն այն պարագայում, եթե մեր թեման գուցարդեմ նրանց նախասիրությունների հետ՝ փորձելով ընդհանրություններ գտնել դրանց միջև: Առաջարկվեց սկզբից կատարել առաջադրված հանձնարարությունները, որից հետո միասին կանցնեինք նրանց նախընտրած աշխատանքներին: Այս առաջարկը առաջ բերեց մեծ ոգևորություն և աշխուժություն:

Ձևայած նրան, որ աշակերտ – ուսուցիչ համագործակցության արդյունքում կարողացանք հաղթահարել մեր առաջ ծառայած դժվարությունները, սակայն մեկ անգամ ևս պարզ դարձավ, որ

դասապրոցեսի ընթացքում ուսուցիչը հանդիպում է բազմաթիվ դժվարությունների, որոնք խոչընդոտում են դասավանդման արդյունավետության բարձրացմանը: Տվյալ իրավիճակում մենք հանդիպեցինք հետևյալ դժվարությունների՝

- առակերտների՝ թեմային չհամապատասխանող նախախրություններ, հետաքրքրություններ
- ուեսուրս-գործոնների բացակայություն
- առակերտների սխալ պատկերացումները ուսուցանվող նյութի վերաբերյալ:
Մեր այս հետազոտական աշխատանքի նպատակն է
- գտնել դասավանդման ընթացքում առաջացած խոչընդոտների լուծման ուղիները,
- առակերտների մոտ ձևավորել հետաքրքրություն դասավանդվող նյութի և սվյալ առարկայի նկատմամբ
- զարգացնել ինքնուրույնություն, ստեղծագործական կարողություններ:
Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝
- ինչպե՞ս ձևավորել հետաքրքրություն դասավանդվող նյութի նկատմամբ,
- ինչպե՞ս առակերտների մոտ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և ստեղծագործական կարողություններ:

Գլուխ 1. ԻՆՉՊԵՕՍ ԶԱՐԳԱՑՆԵԼ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ստեղծագործության մղումը կարող է նույնքան հեշտությամբ մարել, որքան առաջացել է, եթե մնա առանց սննդի»- Կոնստանտին Գեորգեվիչ Պաուստովսկի: Այս խոսքերից արտացոլվում է, որ եթե ուսուցիչը չի աջակցում սովորողի ստեղծագործական մտքի զարգացմանը, ապա բնության կողմից տրված այս հատկությունները կարող են հեշտությամբ կորցնել: Եվ ուրեմն, յուրաքանչյուր

ուսուցչի խնդիրը առաջին հերթին ոչ միայն աջակցելն է, այլ նաև զարգացնել երեխանների ստեղծագործական մտածելու կարողությունները: Յուրաքանչյուր աշակերտ քիչ թե շատ ընդունակ է ստեղծագործելու, որը անհատականության ձևավորման մշտական և բնական ուղեկիցն է:

«Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում բացահայտվում են սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման մեծ հնարավորություններ, զարգանում է աշխարհիայացքը, սերմանում ինքնուրույն աշխատանքի հմտություններ: Կարևոր դեր է խաղում հատկապես աշխատանքային մշակույթի ձևավորումը՝

- աշխատանքի կարգապահության պահպանումը,
- նյութերի և ժամանակի խնայողությունը,
- գործիքների և սարքավորումների ճիշտ օգտագործումը,
- անվտանգության կանոնների պահպանումը:

Տեխնոլոգիայի գործունեության հիմնական նպատակն է՝

- ձեռքի աշխատանքի նկատմամբ սեր և հետաքրքրություն արթնացնել,
- զարգացնել սովորողի մոտ ստեղծագործական կարողություններ,
- ձեռք բերել նոր գիտելիքներ,
- հմտություններ և կարողություններ,
- նախաձեռնողականություն,
- և այլ որակներ:

Տեխնոլոգիայի դասավանդման նպատակն է սովորողներին ակտիվ ստեղծագործական գործունեության մեջ ներգրավելը, տարբեր ծագման նյութերի հետ աշխատելու հմտությունների և կարողությունների ձևավումը: Սովորողների մոտ զարգանում է ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և ստեղծագործական ունակություններ:

Գիտելիքը, խոսքը և, իհարկե, ստեղծագործական կարողունակությունները առաջացնում են նոր գաղափարներ, ստիպում մտածել ոչ ավանդական:

Այս բոլոր որակները կարող են և պետք են զարգացնել տեխնոլոգիական գործունեություններ կազմակերպելիս: Երեխանները շատ են սիրում աշխատել, ինչ-որ բան անել սեփական ձեռքերով, առաջին հերթին իրենց պատրաստածի արդյունքը տեսնելու համար: Սակայն այդ արդյունքը տեսնելու համար նրանք պետք է անցնեն մի քանի փուլ, որպեսզի հասնեն ցանկալի արդյունքի: Ուսուցիչը, ներգրավելով սովորողներին ստեղծագործական գործունեության մեջ, զարգացնելով ուսման մոտիվացիան, ճանաչողական հետաքրքրություններ,

փորձում է նրանց ներգրավել հարցերի պատասխաններ գտնելու մեջ: Բարելավելով նրանց գիտելիքների որակը, հմտությունները, ինքնուրույնության աստիճանը՝ զարգացնում է մտավոր գործունեությունը, խոսքը և, իհարկե, առաջին հերթին, ստեղծագործ անհատականություն, այլ ոչ միայն որոշակի գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը:

Հիմնական ստեղծագործական ներուժի հիմքը արդեն նկատում են վաղ տարիքում, ուստի չափազանց կարևոր է «սնունդ» տալ ոչ միայն դրա պահպանման, այլև զարգացման համար:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լայն հնարավորություններ են ստեղծում կրթական համակրգում դրանց կիառման, կրթության գործընթացում անձի ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար: Հենց նոր տեխնոլոգիաների հետ են այսօր ասոցացվում կրթական համակարգի կառուցման իրական հնարավորությունները, որոնք թույլ են տալիս յուրաքանչյուր սովորողի ընտրել իր ուսումնական ուղին, որի արդյունքում երեխան զարգանում է իտելեկտուալ և էմոցիոնալ, որոշում է իր վերաբերմունքը կյանքի նկատմամբ և իր դերը դրա մեջ, ձեռք է բերում կոլեկտիվ փոխգործակցության փորձ, բարելավում է տարբեր գիտելիքների և նյութերի հետ աշխատելու հմտություններ: Այսինքն՝ մարդու մեջ ստեղծագործական սկզբունքը միշտ ձգտում է առաջ, դեպի լավը, դեպի առաջընթացը, դեպի կատարելությունը: Եթե դեռահասության տարիքում ստեղծագործականությունը չի դառնում արժեքային կողմնորոշում, ապա հավանականություն կա, որ հետագայում այն չձևավորվի: Ուստի, եթե մենք այս տարիքում չաջակցենք սովորողի անձնական ստեղծագործական ներուժի, ինքնուրույն որոշումների և նախաձեռնողական կամքի զարգացմանը, նրան կդատապարտենք: Ստեղծագործող մարդը ունի լայն հայածք, մտահորիզոն, համատեղում է տարբեր գաղափարներ, աշխատանքը նրան հաճույք է պատճառում:

Ստեղծագործական, ինքնուրույնության և նախաձեռնողական ունակությունները չեն կարող զարգանալ ինքնուրույն և, հետևաբար, պահանջվում են վերապատրաստման և կրթական հատուկ կազմակերպված գործընթաց: Այս գործընթացում իր ուրույն տեղն ունի «Տեխնոլոգիա» առարկան, որի գործունեությունը ծավալվում է տարրական դպրոցից և շարունակվում հիմնական դպրոց:

Իմ կարծիքով նախ սովորողի մոտ պետք է ձևավորել աշխատանքային կարողություններ և հմտություններ, աշխատասիրություն, հետաքրքրություններ

առաջացնել ձեռքով պատրաստվող ինքնաշեն առարկաների նկատմամբ, որոնք կխթանեն երեխայի ստեղծագործական մտքի զարգացմանը:

Ահա, թե ինչպես ես փորձեցի հետաքրքրություն ձևավորել հայկական արհեստների և արվեստների նկատմամբ:

Թեմա՝ Նյութերի գեղարվեստական մշակում:

Այս թեմայի առաջին դասը՝ «Պատմական անարկ կարպետագործության մասին»

Դասը սկսեցի բանալի բառեր մեթոդով՝ ծակոց, վարագույր, թամբ, խուրջին, աղի տոպրակ, ձիու ծածկոց, վերմակ, փռոց:

Այս մեթոդով փորձեցի մոտիվացնել աշակերտներին նոր դասի հաղորդմանը:

Խթանիչ հարցերի օգնությամբ ստուգեցի նրանց գիտելիքները հայ ժողովրդական հնագույն մշակույթների մասին՝ բորբոքելով իմանալու ցանկություն: (3-5րոպե)

Որպեսի աշակերտների մեջ սեր և հետաքրքրություն առաջանա հայ ժողովրդի ինքնատիպ մշակույթի լավագույն դրսևորումներից մեկի՝ գորգերի և կարպետների մասին, ես ներկայացրի և ցուցադրեցի Էկրանին գորգերի ստեղծման պատմությունը՝ շեշտը դնելով գորգերի վրա, քանի որ կարպետագործության մասին դասագրքում որոշ տեղեկություններ կան:

Անհիշելի ժամանակներից Հայաստանը ճանաչված է իր գորգերով և կարպետներով: Հայաստանում գորգագործությունը և կարպետագործությունը դեկորատիվ կիրառական արվեստի ամենակարևոր ճյուղերից մեկն է: Յուրաքանչյուր ժամանակաշրջանում գորգի հորինվածքը եղել է մշակույթի լավագույն կողմերի հանրագումարը: Ժողովուրդը իր ցանկություններն ու մտահաղացումները արտացոլել է զարդանախշ խորհրդանշանների օգնությամբ:

Դասի ընկալման փուլում սահիկաշարի ցուցադրությամբ ներկայացրի հետևյալ տեղեկատվական նյութերը՝

1. Հնագույն հայկական գորգերից շատերը պահպանվում են ամենահռչակավոր թանգարաններում, արտացոլվել են վերածննդի նկարիչների ստեղծագործություններում:
2. Հայերենում գորգ և կարպետ բառերը օգտագործվում են որպես հոմանիշ բառեր՝ միայն այն տարբերությամբ, որ գորգերն ունենում են թելախավ, իսկ կարպետները՝ ոչ:
3. Գորգը բազմագույն զարդանախշերով, խավածածկ գեղարվեստական գործվածք է: Ծառայում է որպես փռոց, ծածկոց, վարագույր, բնակարանը

տաքացնելու, զարդարելու, ինչպես նաև ձայնակլանման համար: Չյուսվում են թելերից:

4. Հանդիպում են ասեղնագործ և գույնզգույն կտորներից կարված գորգեր:
5. Կարպետը բրդիա կամ բամբակյա հաստ գործվածք է, որն իբրև գորգ փռում են հատակին, թախտին և այլուր:

Տարբերակվում են զարդանախշերի երեք խումբ՝ երկրաչափական, բուսական, կենդանական, որի մեջ մտնում են նաև թռչունները:

Հայկական գորգերի առանձնահատկությունը կրկնակի հանգույցն է, պարսիկներն ու թուրքերը գործում են մեկուկես հանգույցով: Հայկական գորգերն ու կարպետները տարբերվում են նաև նրանով, որ արևը, աստղերը, կենդանիները, բույսերը, մարդիկ, վիշապները, օձերը և թռչունները պատկերված են խարհրդանշական պատկերներով: Օրինակ՝ վիշապի նշանը ունի հայերեն S տառի տեսքը:

Գորգերը հայ ժողովրդի ինքնատիպ մշակույթի լավագույն դրսևորումներից են, որոնք համարժեք են քանդակագործությանը և մանրանկարչությանը:

Գորգ գործելու գործիքները շատ քիչ են ենթարկվել փոփոխության: Ակադեմիկոս Յովսեփ Օրբելին նշում է, որ գորգ բառը հայկական ծագում ունի և նշանակում է նախշ: Արաբագետները վկայում են, որ կալի, խալի կամ հալի բառերը ծագել են Կարին քաղաքի անվանումից: Քանի որ Կարին քաղաքը արհեստների, հատկապես գորգագործության խոշոր կենտրոն էր: 13-րդ դարի արաբ գիտնական Յակուտ ալ Համավին նշում է, որ գորգերը Քալիքալա (Կարին) քաղաքի արաբական կրճատ անվանումից՝ Քալի ձևից ստացել են քալի, կալի, խալի անվանումները: Գորգի ամենահին նմուշը գտնվել է Ալթայի Պագրիրկ կուրգանում՝ Արենի 1 քարայրում մ. թ. ա. 5-րդ դարում: Իսկ Արթիկի դամբարանադաշտում հայտնաբերել են գորգ գործելու պարզունակ գործիքներ և գործվածքներ՝ մ. թ. ա. 3-2 հազարամյակին թվագրվող: Մ. թ. ա. 5-րդ դարի հույն պատմիչ Հերոդոտոսը նշում է, որ կովկասցիները ներկում էին բուրդը բույսերից ստացած ներկերով, այնուհետև դրանք մշակում էին թել և նկարագարդում, որոնց գույնը չէր խամրում, ոչ ջրից, ոչ էլ՝ ժամանակի ընթացքում:

Ամենաարժեքավորը տորոն բույսն է, որպես ներկանույթ օգտագործել են բույսի արմատը, ցողունը, տերևները, կեղևը, ծաղիկները և պտուղը:

Կենդանական ծագում ունեցող ներկանյութերից հռչակ էր վայելում Որդան կարմիրը:

Պագրիրկ գորգի ծագումը հայկական լեռնաշխարհի հետ կապը Որդան կարմիրի առկայությունն է:

Դասի կշռադատման փուլում կիրառեցի վենի դիագրամ, քառաբաժան մեթոդները:

Ի՞նչ տեսար. ինչպիսի՞ պատկերներ հիշեցրեց ձեզ	Ի՞նչ լսեցիր
Ի՞նչ զգացիր. ինչպիսի՞ զգացողություն ստացաք սմուշները տեսնելուց հետո	Նոր վերնագիր. ուրիշ ինչպե՞ս կանվանեիր

Դասի ամփոփումից հետո հանձնարարեցի պատրաստել ինքնաշեն դազգահներ՝ ցույց տալով սմուշ-օրինակը:

Մեթոդներ՝ մտազրոհ, զրույց, դիտում, սատանայի հնար, վիենի դիագրամ, քառաբաժան, վարդ, փուշ բողբոջ, 3,2,1:

Տեսալին հանձնարարություն Դասի ամրապնդման համար սովորել դաս 34, էջ 150-151:

Նոր նյութի հավաքագրում գորգերի և կարպետների մասին:

Ջետագա դասընթացների ժամանակ մենք կատարեցինք գործնական աշխատանքներ, որոնց արդյունքում հյուսեցինք կարպետներ:



ԳԼՈՒԽ 2. ԻՆՉՊԵՐՍ ԶԱՐԳԱՑՆԵԼ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստեղծագործելու ունակությունը, նախաձեռնողականությունը, ինքնուրույն կամային հատկությունները որակապես նոր բան առաջացնող հատկանիշներ են: Դրանք մարդու ստեղծագործ աշխատանքի արդյունքն են իրականության մեջ՝ կատարված գործունեության արդյունքում: Ստեղծագործ մարդկանց հետաքրքրում է կյանքը, մարդկային կյանքի տարբեր ոլորտները, տարբեր գիտությունները և գիտատեխնիկական առաջընթացները: Հատկապես նոր բան ստեղծելու, արարելու, հորինելու գործընթաց է այս ամենը: Ուստի մենք հսկայական պատասխանատվություն ունենք՝ զարգացնել երեխայի ստեղծագործական կարողությունները, որպեսզի արդի զարգացած գիտատեխնիկական ժամանակաշրջանում սովորողը կայանա որպես հասարակությանը պիտանի, բարձր ինտելեկտով, բանիմաց, ճկուն միտք և աշխատելու կարողություններ ունեցող մարդ:

Որպեսզի աշակերտների մոտ նախաձեռնողական, ստեղծագործական հարուստ ներուժ զարգանա, անհրաժեշտ է ստեղծել որոշակի պայմաններ: Նախ և առաջ պետք է երեխային իրական ստեղծագործական գործունեության մեջ մտցնել: Հենց այդ ժամանակահատվածում են ծնվում ու զարգանում կարողունակությունները: Կրթության իրական նպատակը, առաջին հերթին, երևակայության, դիտողականության, սրամտության զարգացումն է: Ուսուցչի առաքելությունն է սովորողների մեջ ձևավորել ակտիվություն, մարդամոտություն, հիշողություն, դիտարկում, փաստերը վերլուծելու և ըմբռնելու կարողություն, ինքնաարտահայտում, հետազոտական գործունեության կազմակերպում:

Ուսուցման գործընթացում յուրաքանչյուր օր հանդիպում ենք տարբեր խնդիրների: Մի մասը լուծում ենք ամեն օր, սակայն, կան խնդիրներ, որոնք լուծվում են կյանքի ընթացքում: Ամեն ինչ ցույց տանք տեխնոլոգիա առարկային դասավանդման օրինակով:

«Տեխնոլոգիա» առարկայի դասերին ձեռք են բերվում բավականին տեսական գիտելիքներ, գործնական ունակություններ և հմտություններ:

Օրինակ՝ ներկայացնենք մեր առարկայից «Նախագիծ» թեմայի դասավանդումը: Նախագիծ թեման անցնելիս հարկ եղավ, որ սովորողները ստուգեն տվյալ առարկայից ունեցած գիտելիքները, կարողությունները, հմտությունները: Ժամանակն է նախագծել ու պատրաստել կենցաղային կամ այլ

գործածական իրեր: Ծանոթացանք, որ Նախագիծ կատարելիս պետք է հաշվի առնել որոշակի պահանջներ: Դրանք են՝ տեխնոլոգիական, տնտեսապես շահավետ, երգոնոմիկական, անվտանգային, բնապահպանական պահանջները: Նախագծային գործընթացը բաղկացած է մի քանի փուլերից՝ որոնողական, կոնստրուկտորական, տեխնոլոգիական և վերլուծական: Ծինվածքի դիզայնի և մշակումը՝ ցանկացած պատրաստվող իր պետք է ունենա ֆունկցիոնալ և գեղագիտական արժեքներ:

Սարքավորումների այն հատվածները, որոնք կարող են վտանգավոր լինել մարդու կյանքի համար, ներկվում են կարմիր, վառ գույնով՝ զգուշացնելով վտանգի մասին:

Մինչև անցնելը «Ծինվածքի ընտրություն և պատրաստում» դասին՝ ես սովորողներին առաջարկեցի, որ մեր կիսամյակի ամփոփիչ դասը անցկացնելու ենք Բլումի տաքսոնոմիա ձևաչափով, որի ժամանակ դասը անհարաժեշտ է ներկայացնելու և վերլուծել: Դրա համար դուք ունեք երկու շաբաթ ժամանակ:

Ես նրանց տվեցի ուղղորդող հարցեր և առաջարկեցի խումբ կազմել: Նրանց առաջարկությամբ ունեցանք մեկ խումբ, քանի որ աղջիկների թիվը մեծ չէր:

Չերիքնազ Սիմոնյանին նշանակեցի խոսնակ, ով կտեղեկացներ կատարած աշխատանքների և դժվարությունների մասին:

Սենյային նշանակեցի կազմակերպիչ և գործի բաժանող:

Առաջարկս ընդունվեց մեծ ոգևորությամբ: Այս աշխատանքում նրանք ազատ կարող էին իրենց նախափեռնությամբ ստեղծագործել, պատրաստել կենցաղային կամ գործածական իրեր: Նրանք ոչ միայն պետք է կատարեին իրենց պատրաստած իրերի մասին վերլուծական եզրակացություն, այլ նաև սահիկաշարի օգնությամբ ցուցադրեին և ներկայցնեին, թե իրենց անցած թեմաններից որոնք են կիրառել տվյալ առարկան պատրաստելիս և ինչպես կարող են կիրառել կյանքում: Աշխատանքների մեծ մասը սովորողները իրականացրին դպրոցում: Նախագծի բովանդակությունն ու նպատակը կապված էին ուսումնական ծրագրի հետ:


Դասի նպատակն էր սովորողների մոտ զարգացնել հետազոտական, որոնողական, վերլուծական, մտավոր գործունեություն.

- Գիտելիքների համակցում
- Նախընթաց դասաժամերին ձեռքբերած գիտելիքների հիման վրա տրամաբանական եզրահանգումներ կատարել:
- Չմտություններ և կարողունակություններ

- Ամրապնդել կարդացածը և լսածը վերարտադրելու և կատարելու հմտությունները
- Նպաստել սովորողների ինքնադրսևորման և ինքնաարտահայտման հմտությունների ձևավորմանը:

Աշակերտները աշխատում էին համագործակցային միջավայրում և փոխգործակցում աշխատանքային գործընթացի մեկնարկից սկսած, ուստի նրանք կիսվում էին իրենց փորձով: Նախագծային ամփոփիչ դասի թեման՝ «Կենցաղային իրեր»:

Չերիքնագ Սիմոնյանը ներկայացրեց խմբի անդամներին, որից հետո ցուցադրեցին իրենց պատրաստած աշխատանքները: Այնուհետև սահիկաշարի միջոցով համացանցից վերցրած նյութերի օգնությամբ ներկայացրին դասը: Առաջինը ընտրել էին «Մասնագիտական կողմնորոշում» թեման: Նշեցին, որ մասնագիտության ընտրությունը բարդ և պատասխանատու քայլ է յուրաքանչյուր մարդու կյանքում: Ապագա աշխատանքը պետք է լինի հաճելի և ոչ թե հոգս: Մասնագիտության ընտրության բանաձև՝



Ելնելով աշխատանքի տեսակներից՝ մասնագիտությունները բաժանվում են հինգ խմբի՝

- Մարդ - կենդանի - բնություն (բնապահպան, երկրաբան, կենդանաբույժ, կենսաբան և այլն):
- Մարդ - տեխնիկա (ինժեներ, կոնստրուկտոր, տեխնոլոգ, վարորդ, փականագործ և այլն):
- Մարդ - մարդ (ուսուցիչ, բժիշկ, հոգեբան, վաճառող, մատուցող, իրավաբան և այլն):
- Մարդ - նշանային համակարգ (տնտեսագետ, ծրագրավորող, հաշվապահ, գծագրող և այլն):
- Մարդ - գեղարվեստական կերպար (ոսկերիչ, նկարիչ, ձևավորող, դերասան, դիզայներ և այլն):

Չաջորդ՝ «Տնտեսվարման և ձեռնարկչության տարրեր» թեմայից նյութեր ներկայացրին՝ ընդգծելով, որ ցանկացած պետություն իր քաղաքականությունը մշակելիս հաշվի է առնում տնտեսագիտության սկզբունքները, օրենքներն ու օրինաչափությունները, զարգացման հեռանկարները: Շուկայական հարաբերությունների ձևավորման և հետագա զարգացման փուլերում տնտեսության ցանկացած ոլորտում կարևորագույն նշանակություն ունի ձեռնարկատիրական գործունեությունը:

Ընտանիքը հասարակության կանոնագույն օղակներից է: Իչպիսի՞ կարիքներ ունի ընտանիքը և ի՞նչ միջոցներ է օգտագործում դրանց բավարարման համար: Ընտանեկան բյուջե, եկամուտ և ծախս:

Դիզայն թեմայից ներկայացրին դիզայնի տեսակները՝

- արդյունաբերական դիզայն
- գրաֆիկական դիզայն
- ճարտարապետական դիզայն
- լանդշաֆտային կամ միջավայրի դիզայն
- ֆիտոդիզայն

«Կոմպոզիցիա» լատիներեն բառ է, որը նշանակում է ստեղծագործություն, կազմում, կառուցում: Կոմպոզիցիայի դերը մեծ է ստեղծագործական աշխատանքներում, որին լրացնելու է գալիս գույնը և գունավորումը: Ներկայացրին, թե որոնք են տաք, սառը և չեզոք գույները և ինչպիսին է դրանց ազդեցությունը: Օրինակ, տաք գույնը բարձրացնում է տրամադրությունը: Սառը գույները հանգստացնում են, տրամադրում են անդորրի: Նրանք նշեցին, որ այս բոլոր նշված թեմաները շատ կարևոր են, քանի որ կյանքում դրանք կկրիառվեն իրենց առօրիայում:

Այնուհետև յուրաքանչյուր աշակեր ներկայացրեց իր աշխատանքը՝ նկարագրելով պատրաստած առարկայի տնտեսագիտական հաշվարկը, որ ձևավորվում է օգտագործվող տարբեր նյութերից, էլեկտրաէներգիայից, աշխատանքի դիմաց վճարից, ձևավորում է ապրանքի ինքնարժեքը: Վաճառքի արժեքին ավելանում է հարկային արժեքը և վաճառակետին տրամադրվող գումարը: Օրինակ. Ջերիքնազը ներկայացրեց իր ձեռքով պատրաստված պայուսակը: Նշեց, որ պայուսակն ունի հետևյալ դրական կողմերը՝ գեղեցիկ է, հաճելի, արտահայտիչ տեսք ունի, փոքր է, թեթև, ունի տոնական տեսք: Իսկ բացասական կողմերն են՝ ամենօրյա և ամեն գույնի հագուստի հետ չի օգտագործվի, ծավալը փոքր է, անհրաժեշտ պարագաներ դասավորելու համար հարմար չէ և այլն:

Վերլուծելուց հետո նա նշեց, որ պայուսակի ինքնարժեքը կազմել է 5000 դրամ: Բայց ինքը վատճառելու է 25000 դրամ, քանի որ բրենդային խանութում այն վատճառվում է այդ արժեքով: Իսկ եթե ապրանքը ցածր գնահատի, գնորդի մոտ կարծիք կձևավորվի, որ իր ապրանքը ցածր որակ ունի:

Այնուհետև աշակերտները գնահատեցին և՛ իրենց, և՛ ընկերների աշխատանքները: Ծավալվեց ինքնաքննադատական մոտեցումներ: Յուրաքանչյուր աշխատանք գնահատվեց և արժանացավ զովասանքի:



Այս նախագծային ամբողջ աշխատանքային գործընթացի ժամանակ սովորողների մեջ զարգացրինք հանրակրթական նոր չափորոշչի հիմքում ընկած 8 առանցքային կարողունակությունները:

Աշակերտների մոտ ձևավորվեց՝

- լեզվական գրագիտություն և սոցիալական կարողունակություն,
- սովորել սովորեցնելու կարողունակություն,
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
- ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
- թվային և մեդիա կարողունակություն,
- մշակութային կարողունակություն,
- մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,
- տնտեսական կարողունակություն:

Տեխնոլոգիա առարկան սովորողների մոտ ձևավորում է ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և ստեղծագործական ունակություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս հետազոտական աշխատանքի արդյունքում կատարել ենք հետևյալ եզրահանգումները՝

1. Տեխնոլոգիա առարկան մեծ հնարավորություն է ընձեռում սովորողների մոտ ձևավորելու ինքնուրույնություն, ստեղծագործական, նախաձեռնողական ունակություններ: Դրան նպաստում են Տեխնոլոգիայի գործնական պարապմունքները:
2. Սովորողների համար անհրաժեշտ են բարդ, բայց իրագործելի ստեղծագործական առաջադրանքներ, որոնք առաջացնում են հետաքրքրություն ստեղծագործական գործունեության նկատմամբ և զարգացնում նախաձեռնողական աշխատանք, ինքնուրույնություն, անկախություն ստեղծագործական առաջադրանքների կատարման մեջ:
3. Գիտելիքների կուտակումը միայն ստեղծագործական երևակայության զարգացման նախապայմանն է: Ցանկացած առաջադրանք լավագույնս կատարելու համար պետք է կիրառել համակցված գիտելիքներ:
4. Անհրաժեշտ է բարենպաս պայմաններ ստեղծել սովորողի ստեղծագործական կարողությունների զարգացման համար, ուսումնական գործընթացում առաջադրանքների կիրառման միջոցով:
5. Պետք է օգնել աշակերտին, որպեսզի կարողանա ճանաչել և կիրառել իր ստեղծագործական կարողություններն ու հմտությունները:
6. Դասավանդման գործընթացում չի կարելի բոլոր աշակերտների համար միատեսակ պահանջներ ներկայացնել, անհրաժեշտ է ցուցաբերել անհատական մոտեցում՝ ըստ ընդունակությունների և կարողությունների:
7. Աշակերտների ստեղծագործական աշխատանքների հաճախակի ցուցահանդեսների կազմակերպումը նրանց մոտ կբարձրացնի ինքնուրույնությունը, վստահությունը սեփական ուժերի նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայկական սովետական հանրագիտարան. հատոր 3, ՀՍՍՀ ԳԱ, 1977
2. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատոր Բ, Երևան, 1973, էջ 523-524
3. Պատմական ակնարկ հայկական գորգագործության մասին, Երևան: ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, թիվ 11, 1952թ. էջեր 99-116
4. Կ. Պապիկյան, Կարպետներ և գորգեր, Երևան 2009թ.
5. Ս. Հովսեփյան, Ա. Հարությունյան, Մ. Աղաջանյան, Լ. Վերդիան, Երևան 2015
6. Ривкин Е. Ю. Внеурочная деятельность. Лекция 4 // Управление современной школой. Завуч. — 2013. — № 3. — С. 100–109.
7. Степанов Е. Н. Методические советы по организации внеурочной деятельности учащихся начальных классов // Завуч начальной школы. — 2011. — № 6. — С. 36–48
8. <https://hy.wikipedia.org>